624)։ 1702ին Գրիգոր Մարզուանցի Մէրճան զատէ կը ծաղկէ նոյն ձեռագիրը և նոյն թուականին ալ կը յիշատակուի Ս. Յակ.ի։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊՍ.— 1599ին ձեռագիր Աւետարան մը գերութենէ ազատելով կը կազմէ, և կը գրէ հետևեալ յիշատակագրութիւնները. «...բազում աշխատանուք ի գերութենէ ազատեցի և կազմեցի... դարձեալ Ա.ծ. ողորմի ասացէք Մըղտեսի Գասպարին և ծնողացն, որ բազում աշխատանք կրեց հետ ինձ և զ.խա. ֆլորին ինքն ժողովրդովն աւգնեցին ի հետս և չարչարանք քաշեց ի հետս ի յանաւրինաց մինչև որ ազատեցաք... և դարձեալ ծանիք ամենեսեանդ. ես Յովհաննէս եպիսկոպոսն յիշատակ արի ի յերուսաղէմ Ս. Յակոբա եկեղեցւոյն...։ Ի թուաբերութեան տանս Թորգոմեան ի, ոբեղեան, չորրորդ քառի, ը. թիւ աեղի (1048=1599) նորոգեցաւ սբ. աւետարանս ի Մսր քաղաք ձեռամբ անարժան Յովհաննէս եպիսկոպոսի և յիշատակ եղև ի Սբ. Երսղմ. քաղաք Սուրբ Յակոբ եկեղեցւոյն և Սուրբ Սարգսին»։ Այս Աւետարանը ընդօրինակուած է ՉՁԱ. (= 1332) թուին, գրիչն Սարգիս, տեղի՝ Սիս, Տէր՝ Գրիգոր ֆի.։ Ձեռագիրը կը կոչուի Ծոմեն եղած Աւետարան, որոյ մասին աւանդաբար կը պատմուի թէ բերողը Յոպպէի առջև նաւաբեկութեան կը հանդիպի. և սակայն Աւետարանը կուրծքին վրայ սեղմած ըլլալով՝ կ'ազատի ծովամոյն ըլլալէ։ (Խաչ. Յուց. տետր, ժա էջ 842, ժբ 866—67)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊՍ.— Ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը. Գրիգոր պտրք. Պարոնտէրի ժամանակ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊՍ. ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑԻ (Հանեք).— Մբ. սրկ. 1700ին. Ձռ. 1714 Փետր. 14ին. իր յիշատակարանին համաձայն. (տե՛ս Ալպերտի Աստուածաբանութ. ՄՁ. Թ. 884). աթոռակալ 1717ին. եպս կը ձեռնադրուի Պոլսի մէջ 1726ին Ուլնեցի Կարապետ կթղէն. կը վախճանի 1733ին և կը թաղուի Ս. Փրկչի վանքին մէջ. իր գործունէութեամբ և լեզուագիտութեամբ Շղթայակիր պտրք.ին աջ բազուկը եղած է։ Շղթայակիրի և Կոլոտի անուններուն հետ յիշատակարաններու մէջ գրեթէ միշտ կը յիշուի Յովհաննէս Հաննէ եպս.ի անունը, իբր վաստակաւոր Ս. Յակոբի. նկարած է եկեղեցական պատկերներ, և յօրինած է Պատմ. Ս. Երուսաղեմի անուամբ գիրք մը որ հինգ անգամ տպագրուած է. վերջինը՝ հայատառ